

Ա.ԳՐԻԲՈՅԵՎ



# ԽԵԼՔԻՑ ՊԱՏՈՒՄԱՍ

ԿՈՄԵԴԻԱ 4 ԱՐԱՐՎԱՅՈՎ  
ԹԱՐՅԱՆ Գ.ԱԲՈՎ



---

ՀԱՅՊԵՏՐՈՍ

ԵՐԵՎԱՆ

1958

Ա. С. ГРИБОЕДОВ

ГОРЕ ОТ УМА

(На армянском языке)

Армянское государственное издательство  
„Айнеграт,” Ереван, 1958 г.

Խմբագիր՝ Գ. ՆՈՐԵՆՅ  
Գեղ. Խմբագիր՝ Գ. ԿՈՒԶՄԻՆ

Տեխ. Խմբագիր՝ Գ. ԳԱԼՅԱՑՅԱՆ  
Վերսուլող սրբագրի՝ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Դատվեր 1491

Տիբաժ 3 000

Հանձնված է արտադրության 20/V 1958 թ.:

Ստորագրված է տպագրության 17/X 1958 թ.:


Թուղթ՝ 60×92<sup>1/2</sup> չքառ. ծ, 1 մամ., տպադր. 19,25 ժամ. + 6 ներդիր:  
Գինը՝ 4 կ. 60 գ.:

Հայկական ՍՍՌ Կուսակարի մինիստրության Հրատարակությունների և պոլիցիաֆ-  
արքայակարության Քիմագոր վարչության Ֆ լ ա շ ա ն ։  
Երևան, Արագեղիքյան փ. №65:

## ԳՐԱՎՈՐԱԿԱՆ ԵՐ

Պավել Ակիմասսիկչյան Թամանուշիկան Գործի  
կառավարիչ  
Մաքրաց Պավելովնանան Նրա դուստրը  
Լիգանկա Սպասուհի  
Ալեքսանդր Ատելէանիչյան Մուլէալին Ֆամուսովի  
քարտուղարը, որը ապրում է Նրա տանը  
Ալեքսանդր Ագրիկանիչյան Զայգիկի  
Քնութեան Սկալուզուր, Սկրագել Սկրագեկիչ  
Նատալյա Գմբիտրիկնան Երիտասարդ տիկիններ  
Պատոն Միխայլովիչյան Նրա ամասինը  
Իշխան Տուրան Վահագինի հիշուանունի Նրա կինը,  
վեց զստրերով  
Կոմոնունի առաջիկ Խորենումինանիր  
Կոմոնունի թռունիկ Վագորեցիկի  
Անտոն Անտոնովիչյան Զագորեցիկի  
Պառավ Խլուսատովան Ֆամուսովի քենին  
Պ. N.  
Պ. D.  
Ռեպետիլովիլ  
Պետրովշկա և մի քանի խոսող սպասավորներ  
Բաղմաթիկ և ամեն ահակի հյուրեր, նրանց լակեները և  
ֆամուսովի օֆիցիանաները

Գործողությունը՝ Մոսկվայում, Ֆամուսովի տանը.



## ԳՈՐԾԱՎԱԿԱՅԻ ԹԵՇԱԽՆ ԱՌԱՋԻՆ

### ՏԵՍԱՐԱՆ 1

Հյուրասենյակ. հյուրասենյակում խոշոր ժամացույց. աչից դուռ՝ գեղի Սոֆյայի ննջարանը, որտեղից լավում է դաշնամուրի և ֆլեյտայի նվազը, որը հետո լոռում է: Լիզանկան քնած է սենյակի մեջտեղը՝ բազկարոռում կողքի ընկած: (Առավոտ է. լույսը հազիվ-հազ բացվում է):

### Լիզանկա

(Հանկարծ արթնանում է, ելնում բազկարոռից, նայում է ռուրդը)

Լույսը բացվում է... Ա՛խ, գիշերը ինչ շուտ անցավ:  
Երեկ խընդըռում էի՝ քընեմ՝ մերժեց:  
«Սպասում ենք բարեկամիս».—Աչք է պետք, տե՛ս.  
Եկ չըքնե՞ս՝  
Մինչև աթոռից ցա՛ծ չընկնես:

Հիմա, հենց նոր էի քնովն անցել,  
Բայց ցերե՛կ է արդեն... Նրանց աեղեկացնեմ...

(Ծեծում է Սոֆյայի ննջարանի դուռը)

Դուք, պարսննե՞ր,  
Էյ, Սոփյա Պավլովնա, փորձանք է պատահել:  
Ամբողջ գիշերն անցավ՝ հերիք է զրուցեք.  
Դուք, Ալեքսեյ Մատվանիչ, խուլ հո չե՞ք:  
Աղջի՛կ պարսն... Ու չեն էլ սարսափում: Օ, ո՞չ:

(Հեռանում է դոնից)

Դե, հյուր անկոչ,  
Գուցե հիմա հայրիկը նե՞րս մըտնի:  
Դե ծառայի՞ր, խընդրեմ՝ սիրահարված մի օրիորդի:  
(Կրկին մոտենում է դոներին)

Բաժանվեցե՞ք, դե... Առավո՞տ է.—Ի՞նչ, ինչպե՞ս

Սո Փյայի ի ձայնը  
Ժամը քանի՞սն է, տես:

Լի զա  
Տունն է ոտքի ելել ամբողջապես:

Սո Փյա

(Եր սենյակից)

Ժամը քանի՞սն է, տես:

Լի զա  
Յո՛թն է, ո՛ւթն է, մոտ է տասի՞ն:

Սո Փյա

(Եր սենյակից)

Ճիշտ չէ:





*Լիդա*  
(Պանիք հեռու)

*ԱՌխ, անիծված դու սեր:*

*Թեհ լըսում,*

*Բայց հասկանա՞լ իսկ չեն ուզում:*  
*Իսկ թե լուսամուտի փեղիերը ես բանամ,*

*Կամ ժամացույցն առաջ զըցեմ.*

*Թեհ, դիտեմ՝ կըբարկանան.*

*Սախակեմ՝ նըվագը թող հընչի:*

(Բարձրանում է արօնի վրա, առաջ է շարժում սլաքը. Ժամացույցը  
զարկում և նվազում է):

## ՏԵՍԱՐԱԿՈՒՄ 2

*Լիդան ե Յամմուռոնդը*

*Լիդա*

*ԱՌխ, իմ պարոնն:*

*Յամմուռոնդ*

*Պարոննը, հա՞:*

(Կանգնեցնում է ժամացույցի սլաք)

*Այդ ի՞նչ չարաճըն ես դու, աղջի՞:*

*Զէի՞ հասկանում ես, թե ի՞նչ փորձանք էր դա.*

*Կարծես՝ մեկ ֆլեյտա էր հընչում ու մեկ էլ՝ դաշնամուր,*  
*Սոֆյայի նվագի համար շատ չէ՞ր կանուխ:*

*Լիդա*

*Ո՞չ, ո՞չ պարոնն... Այդ ե՞ս... Պատահարարն...*

*Յամմուռոնդ*

*Հենց այդ է, հա, պատահարար... Զեզ պետք է հետեւ, հապա,*  
*Այդ, երկի, դիտմամբ:*

(Հրապում է Լիգային և սկսում է սիրախաղ)

*Օ՛յ, խորամանկ. Օ՛յ, աներե՛ս:*

*Lի զ ա*

*Ինքնե՛րդ եք աներես, ալարքը ձեր՝ սաղմում է ձեզ:*

*Ֆ ա մ ո ւ ս ո վ*

*Համե՛ստ ես, բայց քո ուղեղում  
Գըժությունի՛ց, քամո՛ւց բացի՝ բան չի՛ խաղում:*

*Lի զ ա*

*Թողե՛ք... ինքնե՛րդ եք հենց թեթևամիա.  
Ուշըի՛ եկեք, դո՞ւք, ծերուկնե՛ր...*

*Ֆ ա մ ո ւ ս ո վ*

*Նո՞ւ, համարի՛ր:*

*Lի զ ա*

*Ի՞նչ կանեինք, թե մարդ մըտներ:*

*Ֆ ա մ ո ւ ս ո վ*

*Ո՞վ պիտի գար այստեղ:  
Սո՞վյան, չէ՞ որ, քնած է դեռ:*

*Lի զ ա*

*Բարեհաճեց քնել հիմա՛:*

*Ֆ ա մ ո ւ ս ո վ*

*Հիմա՞ Գիշե՞րն հապատ:*

*Lի զ ա*

*Գիշերն ամբողջ... կարդում էր նա:*

*Ֆ ա մ ո ւ ս ո վ*

*Մի տե՛ս, ի՞նչ քըմահաճույքներ առաջացան:*

Լիդա

Շաբունակ՝ ֆրանսերե՞ն, և բարձրաձայն,  
իր սենյակում առանձնացած:

Ֆամուսով

Պետք չի՝ աչքերը փըշացնի, ասա այդ աղջկան.  
Եվ կարգալուց մի մեծ օգուտ չկա.  
Նա քուն չունի ֆրանսիական գրքից,  
իսկ իմ քունն է աանում սաստիկ—ռուսականից:



Լիդա

Հենց որ զարթնեց՝ կըզեկուցե՞մ.  
Բարեհաճեք դընալ... ես վախենում եմ՝ զարթեցնեք:

Ֆամուսով

Ի՞նչ զարթեցնել, հենց ի՞նքդ ես ժամացուցը լարել.  
Ամբողջ թաղում սիմֆոնիա ես ազդարարել:

*Lit q m*

(Որբան կարելի է՝ բարձր)

Դե ըսպակման է ձե՛զ:

*Ց ա մ մ ո ւ ո ո վ*

(Սեղմելով նրա քերտնը)

Ի՞նչ ես զոռում այդպե՞ս:  
Ի՞նչ է, պիտի գըժվե՞ս:

*Lit q m*

Ես վախենում եմ՝ ըսն ծաղի այս ամենից...

*Ց ա մ մ ո ւ ո ո վ*

*Ի՞նչից:*

*Lit q m*

Մանուկ հո չե՛ք, պարոն. պիտի գիտնաք, էլի՛...  
Առավոտյան թեթև է քունն աղջիկների.  
Մի փոքր շըշնչա՛ս, կամ դուռը ճըռացնեմ՝  
Ամե՞ն ինչ կըլըսեն...

*Ց ա մ մ ո ւ ո ո վ*

*Ամեն ինչում սըտել գիտես:*

(Ս ա Փ յ ա յ ի լ ։ Ճ ա յ ն ը )

*Էյ, Լի՛զա:*

*Ց ա մ մ ո ւ ո ո վ*

(ըսալ)

*Սուսաւ*

(Սենյակից դուրս է սողուկում՝ ոժածայինի վրա):

*Լիգա*  
(Մենակ)

Գընաց... Ա՛խ, աերերից հեռնե.  
Ամեն վայրկյան նրանք վտանգ են մեղ բերում:  
Հեռու մեզնից—ամեն վըշտից էլ առավել—  
Տիրոջ դայրույթ և տիրոջ սեր:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն 3

*Լիգա, Առփյուն մոմել ձեռքին, նըս հետից՝ Մուշտի նը*

*Առփյուն*

Լիգա, այդ ի՞նչ է պատահել:  
Ազմուել ես բարձրացրել արնավը մե՛կ:

*Լիգա*

Ինարիե, ծանր է ձեղ համար, որ բաժանվե՞ք:  
Մինչե ի լույս վամրված է քիչ է զիս, կարծես:

*Առփյուն*

Ա՛խ, լուսացել է խոկապես:

(Մոմել համացնում է)

Եղ լուսաց, և արամոթյուն: Անցնում են զիշերներն այնպես արագ:

*Լիգա*

Յակում եք, երեխ, բայց ի՞նչ արած՝  
Էլ ուժ չըկա վրաս: Մըտավ ձեր հայրը նե՛րո՞՝  
Ես շըշմեցի:  
Շուռ-մուռ եկանըրա առջն՝ և դե՞ն, և դե՞ս,  
Ել չիմացա՞ ի՞նչ սըսնեցի:  
Դե, ի՞նչ եք կանգ առել: Հըաժե՛շա ավեք, պարո՞ն, և գնացե՛ք:  
Վախենալուց կըրծքումը սիրտ չի՛ մընացել:

**Ժամացույցին նայեք. Լուսամուտից նայեք վողո՛ց.**  
**Դո՛ւրս են թափվել մարդիկ՝ արդեն վաղո՛ւց:**  
**Իսկ տանն աղմո՛ւկ, երթեղեկո՛ւմ, ավլո՛ւմ են և կարգի՛ բերում:**

*Ս ո ֆ յ ա*

**Երջանիկները ժամերին չե՛ն հետեւում:**

*Լ ի զ ա*

**Ինչպես կըցանկանաք՝ մի՛ հետեւեք.**  
**Իսկ պատասխա՞նն, ի՞նարկե, ե՛ս կըտամ ձեր աեղ:**

*Ս ո ֆ յ ա*

(Մոլչալինին)

**Գնացեք... ողջ օրը ձանձրույթից պիտի մաշվենք...**

*Լ ի զ ա*

**Աստված ձեղ հետ, ձեռքներըդ ե՛տ քաշեք:**

(Բաժանում է նրանց իրարից. Մոլչալինը դաներում հանդիպում է Յամուսովին):

#### ՏԵՍԱՐԱԿ

*Լ ի զ ա, Ս ո ֆ յ ա, Մ ո լ չ ա լ ի ն, Ֆ ա մ ո ւ ս ո վ*

*Ֆ ա մ ո ւ ս ո վ*

**Ի՞նչ պատահար է սատ Մոլչա՞լին, դո՞ւ, եղբայր!**

*Մ ո լ չ ա լ ի ն*

*Ա յ ո ւ ս ո ւ ս ո վ*

**Ի՞նչո՞ւ այստեղ... եվ այս ժամի՞ն:**  
**Սովորն նույնպե՞ս...**

Բա՛րե քեզ, Սո՛ֆյա, այս ինչո՞ւ  
Այսպես կանուխ ելե՛լ ես դու.  
Ի՞նչ հոգսերով: Խոսի՛ր.  
Եվ տերն ինչպե՞ս անժամանակ հանդիպեցրեց ձեզ իրարուտ

Ո ո Փ յ ա

Նա ներս մտավ հենց նոր:

Մ ո ւ չ ա ւ ի ն

Հիմա՞... զբոսանքի՛ց:

Ֆ ա մ ո ւ ս ո վ

Զի՞ լինի, բարեկամ, որ զբոսնելու  
Անկյուն ընտրես փոքր-ինչ հեռու:  
Իսկ դու, աղջի՛կ պարոն, հենց անկողնիցդ ելար՝  
Տըղամարդո՞ւ հետ... ջահելի՞ւ:  
Զբաղմունքն այդ աղջկան կըվայելի՞ւ:  
Ամբողջ գիշեր գիշեր ես կարդում մտացածին.  
Ահա՛ և պտուղներն այդ քո կարդացածիւ:  
Կուղնեցի մո՞ստ և ֆրանցուղներ՝... այդ նըսանցից եք ուսանել  
Նոր տարապնե՞ր, հեղինակնե՞ր և մուսանե՞ր:  
Թե՛ սրաերի, թե՛ գրպանի կործանիչներ.  
Թող տերն ի՞նքը մեզ ազատի  
Նըրանց զըլիսարկների՞ց, չեպչիկների՞ց:  
Գընդասեղ ու ծամկալների՞ց,  
Եվ գրքերի՛, բիսկվիտների՛ կըպակներից:

Ո ո Փ յ ա

Թո՛ւյլ տըլիք, հա՛յր... Գըլո՛ւխս է պտտվում:  
Վախից հազի՛վ եմ ես շնչում.  
Եե՛րս վազեցիք՝ արա՛գ այնպես...  
Շըփոթվեցի՛...

Ֆ ա մ ո ւ ս ո վ

Շնորհակա՛լ եմ խոնարհապես.

Այդ ես արագ ներս վազեցի.  
Ես վախեցրի, խանդարեցի:  
Ես ինքս, Սո՛ֆյա Պալլովնա, հուզված եմ, խենթ ոլողես,  
Հանդիսա չունեմ օր և գիշեր.  
Պաշտոնական գլխացավանքս էլ չիշեմ...  
Մեկ սա՛ է ի՞նձ կըպչում, մեկ նա՛—  
Բոլորի հոգսն է իմ վրա՞ն.  
Բայց ես կըսպասեի՞ մի նոր գլխացավանք,  
Որ ինձ խարեր...»

Ո ո Փ յ ա  
(Արցուններով)  
Ո՞վ խաբեր, հա՛յր...

Յամ ուսուզի  
Եվ աե՛ս, գեռ ի՞նձ կմեզագրեն,  
Թե նախասում եմ միշտ անմտարա՞ր:  
Լաց մի՛ լինի Բա՛ն եմ ասում, լսի՛ր դու ինձ,  
Եվ մի՞թե չենք եղել մենք հոգատար,  
Քո կըսթությա՞ն համար — օրորսցի՞ց:  
Մայրդ մեռավ, չըզբլացա՛.  
Երկրո՞րդ մի մայր ես վարձեցի:  
Մազամ մողյե՛...  
Ոսկե այդ պառավին դարձրի վերակացուղ.  
Խելո՞ք էր, հե՛ղ բարքով, վարքով իր հազվադյունուտ:  
Նրա համար մի բանն էր միմիայն անպատճառեր.  
Տարին հինգ հարյուր ոռոքլիով ավել,  
Նա թույլ տվեց, որ մեկ տրիշն իրեն վարձե՞ր:  
Բայց ուժը մազամի մեջ չէ՞ր.  
Ինչի՞դ էր պետք այլ մի տիպար,  
Երբ քո առաջ քո հա՛յրը կար...  
Դու ի՞նձ նայիր, չեմ պարձենում կազմվածքով,  
Բայց դեռ առնեյդ եմ, թարմ, ապօել եմ մինչ հասակն այս ծեր,  
Աղա՛տ, այըի՛, ինքս իմ գլխին տե՛ր...  
Հայտնի իմ վանակա՞ն վարքով...

Լի զ ա

Համարձակվում եմ, մե՞ր...





**Յ ա մ ս ւ ս ս պ**

*I*լըսել...

ԱՌԱ, զար սարսափելին  
Հաղիութեա՝ ինչի՞ց ըսկսես...  
Բոլորն էլ խմառաւն գարձան՝ ոչ ըստ հասակների:  
Իսկ աղջիկները՝ առավել, ինքներս ենք բարեհեղինեղ:  
Վաս չեկան և վրապահան այդ լեզուները մեղ.  
Ըստ սամսների

ՄԵՐ աներում շրջմուիկներ ենք առաւմ ներս,  
ԱՐ մեր աղջիկներին սովորեցնեն ամեն մի ըան:  
Եվ ե՛րպ, և քերշություն, և հասաչմաւնք, և պա՛ր:  
Անես, մարզում ենք, որ նրանք ժիժառի՛ հետ ամուսնան. (Մոլչալինին)  
Դու՛, այցելու, ինչու համար, ինչացո՞ւ ևս այսուդ, ողարնե:  
Ես անահերիդ փայփայեցի, իմ ընաանիքն ընկունեցի.  
Քեզ աստիճան այս ասեսութի՛, իմ քարտուղարը զարձըրի.  
Քեզ—իմ աշակցաթյունը Մասկու վախաղըցին:  
Եվ եթե ես չինեի՞ն Տվերում ողիսի ասպարիլեիր:

**Ս ս Փ յ տ**

Ես ոչ մի կերող չեմ հասկանում զայրույթի ձեր...  
Այս առաջնորդ է, համ ապրում, — հանցա՞նը է մեծ.  
Մի սենյակը գնոլու աեղ՝ մյասն է ընկեր:

**Յ ա մ ս ւ ս ս պ**

Ընկե՞լ է, թե ընկնել ուղեց:  
Իսկ ինչո՞ւ եք իրարու հետ: Պատահմամբ չէ:

**Ս ս Փ յ տ**

Ահա՛, այնուամենայնի՞վ, ինչոի՞ս այդ պատահեց.  
Հեց նոր, երբ զուք այստեղ էիք՝ լիզայի հետ,  
Զեր ձայնի... չափազա՞նց ինձ վախեցըեց:  
Եվ աղջ թափով գուրս եմ վազում...

**Յ ա մ ս ւ ս ս պ**

Իրարանցման համար սու ի՞նձ է՝ մեղաղըել ուզում,  
Իմ ձա՛յնն է անաեղի ասպնա՞պ աղդել...

*Ս ո ֆ յ ա*

Չնչին բաներն են մեզ հուզում վաս երազում.  
Երազս ձեզ պատմեմ՝ կհասկանա՞ք արդեն:

*Ֆ ա մ ո ւ ս ո վ*

*Ի՞նչ պատմություն է դա:*

*Ս ո ֆ յ ա*

*Պատմեմ:*

*Ֆ ա մ ո ւ ս ո վ*

(Նստում է)

Դեռ, հա՛տ

*Ս ո ֆ յ ա*

Խնդրեմ... Տեսնում եք... սկըզբում՝  
Ծաղկած մարգագետին, փնտրում էի այնաեղ  
Խոտեր—

Թե ինչպիսի՝—արթնանալուց հետո չե՞մ հիշում դեռ:  
Հանկարծ՝ համակրելի մի մարդ, մեկը այն մարդկանցից,  
Որոնց, տեսանք թե չէ՝ ասես ծանո՛թ ենք դեռ վազուց,  
Ներկայացա՛վ ինձ. նա խելո՞ք էր, շողոքո՞րթ,  
Բայց ամաչկո՛տ... Գիտեք, ո՞վ որ աղքաս ծընվեց...

*Ֆ ա մ ո ւ ս ո վ*

Աղջիկս, ա՛խ, դու այդ հարվածը չիջեցնես:  
Աղքատը—դույդ չի լինի քեզ:

*Ս ո ֆ յ ա*

Հետո՝ ամեն ինչ չքացավ. մարգագետին, երկինքի՝—  
Իսկ մենք—մըթին մի սենյակում.  
Եվ, ի վերջո, այդ հրաշքում  
Բացվեց հատակը—այնաեղից դուրս եկաք դո՛ւք.  
Գունա՛տ էիք դուք—մա՛հ որպես,  
Եվ մաղներդ բիզ-բի՛զ...

Այդաեղ որսամունքով դռները բացվեցին,  
 ինչ որ մարդիկ, թե զազաններ, մեզ զատեցին —  
 իմ մոտը նըսատղին տանջել ըսկուցին:  
 Թա՞նկ էր նա ինձ համար, ասես, ամեն դանձից.  
 Զգտում էի նրան, բայց թե քաշում էիք դուք ինձ:  
 Մեղ ուղեկցում էին սուլո՞ց, հառա՞չ ու ո՞ղը,  
 Հրեշների քրքի՞չ:  
 Մեր հետեխց նա արձակում էր ձի՞չ...  
 Երբ արթնացա՞ խոսակցություն ես լսեցի.  
 Ձե՞ր ձա՞յնն էր դա:  
 Ինչո՞ւ այդպես կանուխ, մտածեցի  
 Դուրս վազեցի և երկուսիդ այստեղ գըտաւ

*Յ ա մ ո ւ ս ս վ*

Այս՝ ինչպես տեսնում եմ, վա՞տ երազ է դա:  
 Եթե խաբեռություն չըլինի—այդաեղ ամեն ինչկա—  
 եզ քա՞ջք, և սե՞ր, և ծաղիկնե՞ր, երկյո՞ւղ...  
 Նո՞ւ, պարո՞ն իմ, իսկ դո՞ւք:

*Մ ո ւ չ ա լ ի ն*

Ես է՛լ ձեր ձայնն էի լըսում:

*Յ ա մ ո ւ ս ս վ*


Զըվարձալի՞ է, պա՞հ.  
 Սրանց իմ ձայնն է գըրավել. ինչպես էլ ճշտապահ,  
 Հասել նա բոլորին, և բերել է այստեղ լուսաբացին:  
 Ասա, ինչո՞ւ համար, դու իմ ձայնից շտապեցիր:

*Մ ո ւ չ ա լ ի ն*

Թղթեր բերի՞ ահա՞—ու:

*Յ ա մ ո ւ ս ս վ*

Հա՞: Հենց դրա՞նք էին պակաս:  
 Շնո՞րհ արեք. այդ ի՞նչ, հանկարծ, ասե՞ք,  
 Գըրագրական զործում դարձել եք ջանասե՞ր:  
 (Վեր է կենում)



Դե՛, Սակյուշկա, հանգի՛ստ ասմ քեղ, սենյակդ անցիր:  
 Կան երազներ անօրինակ,  
 Իսկ իրականն ավելի՛ է տարօրինակ:  
 Փնարում էիր քեղ համար խո՛տ,  
 Ավելի շուտ՝ գըտար մտերիմի՛դ ծանոթ.  
 Գլխիցդ դո՛ւրս հանիր այդ երազները խակ.  
 Որտեղ հրաշք, այնտեղ չկա և ո՛չ մի կարգ.  
 Նորից գընա դու քընելու: (Մոլչալինին)  
 Գնանք՝ թղթերը քննելու:

### Մ Ա Հ Ա Խ Ա Խ

Բերում էի՞ ձեզ մի՛միայն զեկուցելու,  
 Որ չե՛նք կարող թույլ տալ առանց... որոշ, առանց աեղեկանքի.  
 Ունեն հակասությունն... եվ շատե՛րն էլ կարենը չե՛ն:

### Յ Ա Ժ Ա Խ Ա Խ

Պարո՞ն, ես վախենում եմ մահու չափ՝  
 Չհավաքվե՞ն թղթերն այդ ահազին.  
 Ազատություն տանք ձեզ՝ կըկուտակի՞ք:  
 Իսկ իմ սովորությունն է—մե՛կ.  
 Գո՞րծ է, գործ չէ, ստորագրեցի՞  
 Բեռն իմ ուսից դե՞ն ձգեցի:

(Գնում է Մոլչալինի հետ. դռներից անցնելիս՝ նրան առաջ է բռնիում):

### ՏԵՍԱՐԱԿ 5

#### Մ Ա Փ Խ Ա Խ Լ ի դ ա

#### Լ ի դ ա

Աչտ և առ՞ն: Ահա ձեզ և ծիծա՞դ:  
 Բայց ո՛չ, ծիծաղելու ժամանակ չէ՛ հիմա.  
 Աչքերը մթնեցին, սիրաս նըվաց.  
 Մեղքը աղե՛տ հո չի, բայց թե՞ համբա՛վն է վաս:

## Ս ո ֆ յ ա

Համբավն ինձ ի՞նչ: Ո՞վ ո՞նց կուզի՝ այնպես դատե.  
Բայց հայրըս կըսախիպի մտահոգվեմ.  
Շտապո՞ղ է, անհանգի՞ստ, փնթվնթացո՞ղ.  
Նա այդպիսին էր միշտ, իսկ այս գեղքից հետո...  
Ի՞նքո՞ հիմա դատիր...

## Լ ի դ ա

Դատում եմ ես իմ անձնական փորձո՞վ:  
Զեզ կըփակի. լա՞վ է՞ եթե, ձեզ հետ՝ և ի՞նձ.  
Թե չէ՞ ասովա՞ծ չանի, մի հարվածով  
Մոլչալինի՞ն, և ի՞նձ, և բոլորիս կվանդի՞ տրնից:

## Ս ո ֆ յ ա

Որ մտածես՝ բախտը ինչքա՞ն է քմահաճ:  
Ավելի վա՞տն է պատահում, բայց չե՞ն առւժում:  
Երբ մեր մտքում տիսուր մի բան չկար,  
Մենք նվազով տարված, զիշերն անցնում եր աննկատ:  
Ասես՝ մեզ՝ բախտն էր պահպանում.  
Աչ կասկածում էինք, ոչ անհանգստանում...  
Բայց տես, հսկե՞լ էր վիշտը մեզ թաքստոցից:

## Լ ի դ ա

Հենց այդ է, որ երբեք չըլսեցիք դուք ի՞նձ—  
Խորհուրդը իմ անհամարձակ.  
Ահա և ձեզ փորձանք:  
Ել ինձանից լա՞վ մարզարեն ինչի՞ն է ձեր:  
Պնդում էի. չի՞ հաջողվի այդպիսի սեր  
Հավիտենիցս հավիտյան:  
Բոլոր մոսկվացիների՝ պես՝ հայրիկը ձեր, նույնպե՞ս,  
Կըցանկանար վեսա, որն ունենար աստղե՞ր, աստիճաննե՞ր.  
Իսկ աստղակի՞ր անձինք, մեր մեջն ասած, ո՞չ բոլորն են ունեուներ.  
Գե՛, հասկանում եք. դրա հետ՝ նաև դըրամ,  
Որ լա՞վ ապրեր, կարողանար սարքել և բա՛լ.  
Այժ, օրինակ, գնդապետ Ակալոզմերը—հա՛...  
Եվ ոսկու պա՛րկ, և դառնալու է գեներա՛լ:

## Ս ո Փ յ ա

Հիանալի է նա: Խիստ հաճելի՛ է, որ լսեմ՝  
Ֆրունաի՛, զորաշարքի՛ մասին.

Ծնված օրից մի հատ խելոք խոսք չի ասել:  
Ինձ համար մե՛կ է՝ գե՛տն ընկել, թե ի՛ր հետն եմ ամուսնացել:

## Լ ի գ ա

Այո՛—ո, այսպես ասած, ճոռոմաբա՛ն է, բայց՝ ոչ խորամանկ,  
Ասենք՝ զինվորակա՛ն լինի, կամ թե լինի շտա՛տսկի,  
Ո՞վ է այնպես զգայուն, ուրախ և սրամիտ,  
Ինչպես Ալեքսանդր Անդրեիչ Զա՛յկին:  
Շփոթելու համար չէ՛ր, որ... ձեզ հիշեցրի.  
Վաղուց անցածը չե՛ք վերադարձնի:  
Բայց ես հիշո՛ւմ եմ...

## Ս ո Փ յ ա

Ի՞նչ: Նա բոլորին

Խայտառակել, ծաղրել զիտեր հիանալի.  
Շաղակրատում էր, կատակում, թվում էր ինձ զվարձալի:  
Ում ծիծաղին ուզես՝ կըլնենք հաղորդակից:

## Լ ի գ ա

Իբրև՝ թե: Այդ միայն: Արցունք էր նա թափում,  
Հիշում եմ, խեղճն ինչպես էր ձեզ հրաժեշտ տալիս:  
«Պարո՛ն, լալի՞ս եք:—Ասացի, —ապրեք ծիծաղելո՛վ»:  
Իսկ նա պատասխանեց. «Լի՛զա, զուր չեմ լալիս»:  
«Ում է հայտնի՝ ի՞նչ կգտնեմ վերադարձիս,  
Ի՞նչքա՞ն բաներ, գուցե, կըկորցնեմ...».  
Խղճուկն, ասես, զիտեր, որ երեք տարի ա՞նց...

## Ս ո Փ յ ա

Լըսիր, ազատություն չտաս քեզ չափազա՞նց.  
Գուցե, իրո՛ք վարվել եմ ես թեթևամիտ,  
Գիտեմ, զըղջում եմ ես: Բայց անհավատարի՞մ.  
Եվ ե՞րբ, կամ ո՞ւմ հանդեպ, որ ինձ նախատեին.

ՄԵՆՔ, ճիշտ է, զայգիս հետ ամեն, կրթվել ենք միասին.  
Իրա՞ր հետ լինելու ամենօրյա ապրությամբ  
Մեր մեջ առեղջվել էր մանկական մասերության  
Բայց թե՞ հետ  
Մեզ մաս զգում էր ձանձրություն  
Եվ հայվաղե՞ո էր համախոմ մեր տուն,  
Հետո կրկին նա ձեացավ սիրահարված,  
Խառապահո՞նչ և վշարցո՞ծ...  
Խերը, ճարարախան էր, սրամիտ,  
Առահճառապես բնկերներո՞վ էր երջանիկ.  
Եվ ինքովներ մե՞ծ համարեց  
Իրեն ափեց թափառելո՞ւն:  
Այս, թե մենք մեկին սկսում,  
Էլ ինչո՞ւ է իմեք որոնում, զնում այլքան հոսուն:

### Լիդա

Ա՞ւր է շրջում: Ա՞ր կողմերում:  
Ասում են, թե բուժվել է նա հանգածը կուրուսներում:  
Ոչ թե ցալի՞ց, այլ ձանձրութիւն, — այնուղեալում է ավելի:

### Սովորակ

Եվ, երեխ,  
Այսակո՞ղ է երջանիկ, ուր մարդ շա՞տ է ծիծաղելի:  
Ում որ սիրո՞ւմ եմ ես՝ այդպիսին չէ.  
Մոլաշինն ուրիշի՞ համար կմոռանս ինքն իրեն,  
Հանդընությանը թշնամի, մըշտ ամաչկատ անհամարձակ...  
Ում հետ այլպես անց կկացնես ուբոռոջ գիշեր:  
Նստած ենք, բայց գուրսը գաղաց է լուսացել,  
Ի՞նչ ենք անում, ի՞նչ ես կարծում...

### Լիդա

Ասավո՞ծ դիմի,  
Իմ աիրուհի, ի՞նչ բան ունեմ ես այդ զործում:

### Սովորակ

Զենքու առնում, սըրաի՞ն սեզմում:  
Հոգու խորքիցը հառաչո՞ւմ,





Ո՞չ մի ազատ խոսք չի ասում.

Գիշերն ամբողջ այսպես անցնում.

Չեռքը՝ ձեռքիս, աչքն էլ ինձնից չի հեռացնում:—  
Խոդո՞ւմ ես. կարելի՞ է այդ. ինչո՞վ առիթ տվի  
Քո այդպիսի հռհռոցին:

Լիդա

Ե՞ս... Մորաքո՞ւյրը ձեր՝ միտքըս ընկավ հանկարծ.

Թե ո՞նց փախավ նրա տնից ջահել ֆրանսիացի՞ն:

Ա՞յս, աղավնյա՞կս... շա՞տ ուղեց՝

Սրտնեղությունը թաքցնել—չհաջողվե՞ց.

Մազեր ներկելը մոռացավ՝

Երեք օրից ձերմակեցավ:

(Շարունակում է հոհավ)

Սովորական

(Վետագած)

Այդպես և ի՞մ մասին հետո կը ամբասեն:

Լիդա

Ներեք, ասավա՞ծ վկա, որ ձի՛շտին ասեմ՝

Ես ուղեցի, հիմար ծիծա՛ղը իմ...

Մի փոքը ձեզ զվարճացնի:

ՏԵՍԱՐԱԿՈՒՅԹ 6

Սովորական Սովորական 6

Օպերա

Չեզ մոռա՞ Ալեքսանդր Անդրեիչ Չա՛ցկին:

(Փնում է):

33

Ս ո ֆ լ ա, լ ի զ ա, զ ա ց կ ի լ

զ ա ց կ ի լ

Դեռ լույսը նո՞ր բացված՝ ելել եք դուք ուսքիւ:  
Եվ ես՝ ձեր ոտքերի առաջ:

(Յերմունի համբուրում է ձեռքի)

Դե համբուրե՛ք: Զէի՞ք սպասում ինձ, ասացե՛ք:  
Ինչպե՞ս... ուրա՞խ եք: Ո՞չ: Դեմքի՞ս մի նայեցեք:  
Դուք զարմացա՞ծ: Միա՞յն: Այ քեզ դիմավորո՞ւմ:  
Կարծես՝ շաբա՛թ էլ չի անցել.  
Կարծես՝ երե՛կ գեռ մենք եղել ենք միասին  
Եվ ձանձրացը ել անշափու մեկու մյուսին:  
Չըկու և մաղաչա՞փ իսկ սեր. շատ լա՛վ եք դուք զարձել:  
Իսկ մինչդեռ ե՞ս,—ինելակորույս և անձնվեր,—  
Աչքերս չե՞մ թարթել քառասունինդ ժամեր,  
Եվ սրլացել եմ՝ յո՞թ հարյուր վերսալից ավել,—  
Քամի՞ և փոթորի՞կ.  
Ես կորցրել եմ ինքըս ինձ, բնկել քանի՛ քանի անդամ.  
Եվ սա՛ է սիրությանըս հասուցումն, ահա՛:

Ս ո ֆ լ ա

Ա՛յս, զա՛ցկիլ, շատ ուրա՞խ եմ ձեզ համար:

զ ա ց կ ի լ

Ուրա՞խ եք դուք, ձեզ բարի ժա՞մ եմ ցանկանում:  
Սակայն, անկեղծորեն՝ ո՞վ է այդպես ուրախանում:  
Թըվում էր ինձ, որ վերջապես,  
Մըսեցնելով մարդկանց և ձիերի՞ս  
Ինքի՞նքըս էի միայն զվարճացնում:

լ ի զ ա

Ահա՛, պարոն, թե լինեիք դուք դուն մո՞ւ:  
Մենք հենց այսաւեղ, մի հինգ բազե, չրկու  
Ինչ ձեզ հիշո՞ւմ էինք, տառվա՛ծ վկատ:  
Ինքնե՛րդ տառցեք, օրիորդ:

## Ա ս ֆ յ ա

Ո՞չ թե հիմա, այլ միշտ էի մըսաբերում:  
Դուք չեք կարող ինձ խոսք ասել նախառական,  
Ո՞վ էլ անցներ այս կողմէրում,  
Կամ գույն բացեր՝ անցո՞րդ, օտարական  
Թեկուզ հեռու՝ երկրից, պատահարա՞ր,  
Թեկուզ լիներ և նախատի,  
Հարցնում էի, որ նախատի  
Զեղ չի տեսել, արդյոք, կտրի մեջ փոստատա՞րտ

## Զ ա ց կ ի յ

Ենթագրենք, թե այդպես է դա:  
Երջանիկ է նախառացադն, աշխարհը ջե՞րմ նըա համար:  
Ա՛խ, ահ՛ե իմ, մի՞թե ես կրկին  
Սյամե՞ղ եմ, Մոսկվայո՞ւմ, ձեզ մո՞տ  
Ինչպէս ես չո՛խեմ անցյալը հին:  
Ո՞ւր է այն ժամանակն, ո՞ւր է հաստին անժեդ,  
Երբ մենք երկար գիշերներով, այնպես թեթէ  
Մեկ նայտնըվում, մեկ չքանում այս ու այնտեղ,  
Խոպում ու ազմելում էինք՝ սեղանների, աթոռների հետեւ...  
Անձ այնանդ, մազամի հետ, քարտ էր խաղում հայրիկը ձեր,  
Իսկ մենք, այն մո՞ւթ անկյունի մեջ, կարծեմ...  
Նիշո՞ւմ եք գուք՝  
Ցընցվում էինք, երբ ճո՞նչար սեղան կամ դռւու...  
,

## Ա ս ֆ յ ա

Զարաձընիություն:

## Զ ա ց կ ի յ

Եյո, իսկ այժմ գուք—սասնյոթամյա—  
Ծաղկե՞լ եք աննըման  
նվ ձեզ նայանի՞ է դա:  
Ուստի համեստ եք գուք, չե՞ք հետեւմ բարձրաշխարհին:  
Դուք չի՞ք սիխահարված արդյոք, սպասում եմ ձեր պատասխանին  
Ասե՞լ առանց մտորմունքի, ինչո՞ւ շըփոթվեցիք:

Առ Փատ

Այս ուժմ է, որ չեն շըմ թի  
Հայրեցն արագ և հայացքը հետաքրքիր...

Զայ կեյ

Ներեք: Ինձ ի՞նչը պետք է զարդացնի՝ ձեզնի՛ց բացի:  
Եվ ի՞նչ նորություններ ունի Մոսկվան՝ ինձ ցույց տալու:  
Երեկ՝ կար մեկ պարանանգես, վաղը երկուսն է լինելու:  
Մեկը՝ հաջո՞ղ է նշանվում, իսկ մյուսը՝ գլուխ չի՛ բերում:  
Զրույցը նույնն է միշտ, նույն քառյակներն ալրոմիներում:

Առ Փատ

Հայածանքներ Մոսկվայի գեմ: Ի՞նչ է հաշանակում՝ ահսել եք կյանք:  
Իսկ որտե՞ղ է ավելի լավ:

Զայ կեյ

Այնաեղ, ուր մենք չկա՞նք:

Իսկ ձեր հայրեցի՛լը, ակումբին անգլիական  
Հավատարիմ անդա՞մ է զեւ հավերժական:

Ձեր հորեղամյը չավարտե՞ց իր գարն արդյոք:

Իսկ մյուսը՝ թուրք էլ նա, թե հույն...

Արագիլ՝ սովոր և թխագույն:

Անունն իսկ չեմ մտարերում.

Ուր մանելի՝ գե՞մդ էր սահում.

Եվ ճաշասենյակի՞մ և հյուրազնո՞ւմ:

Իսկ այս երե՞քը—զեմքերը բուլվարայի՞ն—

Որոնք կե՞ս զար ջահելանում են գեռ,

Քույրիկների շնորհի ունեն միլիոնն ազգականներ,

Եվ ազգակից են զառնալու ամբողջ եվրոպայի՞ն:

Իսկ մեր արե՞ս... զա՞նձն տաստ.

Ճակատին դրված. Թատրոն և Մասկարայ:

Իր տան պատերը նկարած, ինչպես պուրակ.

Ինքը հաստի՛կ իր գերասանները՝ բարակ:

Ճիշո՞ւմ եք, պարանորեսում,

Գաղանի մի սենյակում, գտանք մենք երկուսով՝

Մի ժա՞րդ կար թաքնված շիրմաների հետեւ,

Սույլե՞ր էր արձակում նա սովակի.

Գաբնանայի՞ն երգիչ ձըմու՞ն եղանակին:

Իսկ նա\*, ձեզ ազգակից, թոքախտավոր ոսո՛խը գըրքերի,  
Որ բուն դրել ուսումնական կոմիտեում  
եղ ճշչալով պահանջում էր երգում,  
Որ ո՞չ ոք չիմանա և չուսանի գրագիտություն:  
Բախտն ինձ կըրկին նըրանց տեսնել է վիճակում:  
Կըձանձրանամ նըրանց ըրջապատռում.  
Իսկ ո՞ւմ մէջ չես զըտնի հետքեր արատների...  
Բայց ե՛թ որ թափառում, վերագանում ևս տուն,  
Հայրենի ծո՛ւխն անդամ քաղցը է և հաճելի:

### Ս ո Պ յ ա

Այս, եթե դուք մորաքըրո՞շ այցելելք,  
Որ մեր բոլո՞ր ծանոթներին թվարկեիք:

### Չ ա յ կ ի յ

Իսկ մորաքըրո՞ւյը. կո՞ւյս է գեռ, իմաստության աստվածուհին:  
Շարունակո՞ւմ է նա մընալ Եկատերինա Առաջինի նաժիշտը հին.  
Մանիկուհիներո՞վ և շըներով իր առնը լի՞:  
Ա՛յս, կրթության անցնենք հիմի:  
Այժմ—ինչպես հընոնց—նոգո՞ւմ են գեռ էլի,  
Որ զորագունդ կազմեն քանակով շա՞մ,  
Գընով արժա՞ն,  
Եվ ոչ թե զիստությամբ հմուտ ուսուցիչների:  
Ռուսաստանում ստիպում են մեզ հարկադրաբար,  
Որ համարենք ամեն մեկին  
Թե՛ պատճառ  
Եթ թե՛ աշխարհագի՞ր:  
Հիշո՞ւմ եք մեր դաստիարակի՞ն,  
Դրլիին թասակ, հագին խալաթ,  
Եվ... ցուցամա՞տ.  
Դրա՞նք էին ուսման հատկանիշներն ամեն,  
Բնչպե՞ս էին հուզում մաքերը մեր համեստ:  
Ինչպե՞ս էինք վաղ հասակից հավատ տածում,  
Թե վրկություն չունենք առանց գերմանացու:  
Իսկ Գլուխե՞ն... Փրանսիացին թեթևամիտ,  
Դեռևս չի՞ ամուսնացել:

Ա ռ Փ յ ա

Բ ու ժ ե մ

Զ ա ց կ ի յ

Մի ուրիշ իշխանուհու, ասենք.  
Հենց օրինակ՝ Անդրեան Պուլսի թիւին:

Ա ռ Փ յ ա

Ինչպես, ոյտի այդ դասաստիւն, անհարժմալ չէ.

Զ ա ց կ ի յ

Ի՞նչ կա, ոտ կավալե՛ր է նա.

Այդ մեղանի՛ց կը պահանջեն,

Որ աստիճան, կարգվածք ունենայինք:

Իսկ Գելյամեն... Այժմ ինչպես է կարգը մեծ ողովակիրի,  
Եվ առների մեր ծըխական:

Տիրում է գեռ խառնուրդ լեզուների.

Նիժեգորովյան և... Փրանսիական:

Ա ռ Փ յ ա

Լեզուների խառնուրդ:

Զ ա ց կ ի յ

Այսու, երկու, անկարելի է, չէ՞ առանց գլան.

Ա ռ Փ յ ա

Բայց դժվար է՝ այդ երկուսից մե՞ր կը ձեր, ձերի նման:

Զ ա ց կ ի յ

Համենայն գեղս, ո՞չ այդպես փըքված:

Ահա՞ քեզ նորությունն Օգտվելով այս լուսեից,

Զեր աեսությամբ աշխուժացած՝

Ես շատախնա դարձա:

Բայց քե՞զ է պատահել և ի՞նձ,

Որ ես հիմա՞ր լինեմ Մոլչալինի՞ց:

Ուր է, ի դեպ. դեռ չի՝ ջազգել կընի՛քը համբության:  
Որտե՛ղ որ երգերի մի նոր ահարա՛կ դըմներ՝  
Պիտի կըպչե՛ր. —

Թույլալվաւթյո՛ւն շնորհեք՝ արտապլության:  
Նու կընասնի, ասենք, մե՛ծ աստիճանների՝.  
Զէ՞ որ հիմա շա՛տ են սիրում անխօսներին:

Ս ո Փ յ տ

(մեկուսի)

Առ օ՛ձ է, ոչ թե մարդ:

(Բարեգածայն և բանազբոսիկ)

Ձեզ հարցընե՛լ եմ ցանկանում.  
Եղե՞լ է, որ վըշտի՛ ժամին կամ՝ խնդությա՞ն,  
Մխալմամբ, մեկի մասին տահք բարի՛ մի բան:  
Թիկուզ և ո՛չ հիմա, մանկութ, ձեր անցյալո՞ւմ:

Չ ա յ կ ի յ

Երբ մե՞զմ էր ամեն ինչ, քնքմւշ էր, չհասունացմած:  
Ինչո՞ւ դնանք հեռուն, ահա և ձեզ բարի զիսրված.

Զանգի զողանիջներով, հենց նոր  
Զյունե անտպատում, զիշեր ու զօր  
Գլխապատու շապաւմ էի ձեզ մոտ  
Եվ ձեզ ինչպե՞ս զբառ, խի՞սու վերաբերմունքով:  
Կես ժամ, ահա, ձեր սառնությա՞նն եմ գիմանում անհույս:  
Դեմք սրբազնույն ուխտագնացի՛...  
Բայց և այնպիս, սիրո՞ւմ եմ ձեզ խելակորույս:

(Բովիական լաւորյան)

Լըսեք, բոլո՞ր խոսքերս ձեզ խիստ թվացինու  
Եվ որևէ մեկին վընա՞ս են պատճառում:  
Եթե այգպիս լինի՛ սի՛ բաս է մըսքիս դավաճանում:  
Ո՛րիէ խենթություն, ես, խենթաբար,  
Ծաղրում եմ մե՛կ անգամ և մոռանում ապատ  
Դե կարգադրեք՝ կըլա՛կ նետին, կերթա՛մ, որպիս մի հըբազե՛րք:

Ս ռ ֆ յ ա  
Այս, շատ լավ է—կայրվել՛ք: Իսկ եթե չայրվել՛ք:

ՏԵՍԱՐԱՆ 8

Ս ռ ֆ յ ա, ի ի զ ա, զ ա ց կ ի լ, Ֆ ա մ մ ո ւ ո ո վ

Ֆ ա մ մ ո ւ ո ո վ

Եվ մյուսն, ահա:

Ս ռ ֆ յ ա

Երազըս ի բարե՛ն, հայրի՛կ:  
(Պուրս է զնում)

Ֆ ա մ մ ո ւ ո ո վ

(Նրա նետելից, կիսաձայն)

Երազըդ նըզովի՛:

ՏԵՍԱՐԱՆ 9

Ֆ ա մ մ ո ւ ո ո վ և զ ա կ ի լ  
(Նայում են դռանը, ուսեղից դուրս գնաց Սոֆյան)

Ֆ ա մ մ ո ւ ո ո վ

Այ թե խաղը հընարեցիք:  
Երե՛ք տարուժ մի երկու խո՛սք չըզըրեցիք:  
Եվ թընդացիք հանկարծակի՝ ինչպես կայծակն ամպից:  
(Գրկախառնվում են)

Բարե՛, իմ բարեկամ, բարե՛, եղբայշ, բարե՛:  
Պատմիք տեսնեմ. պատրա՞ստ է, արդաշ,  
Քո լուրերի ժողովածուն,  
Նստի՛ր, մի շուշտ աեղեկացըու:

(Նստում են)

**Զ ա ց կ ի յ**

(Յրված)

Ինչպե՞ս է լավացե՞լ ձեր Սոֆյա Պա՛վլովնան:

**Ֆ ա մ ռ ւ ս ո վ**

Դուք, ջահեններդ էլ հո, չունե՞ք ուրիշ մի բան: Աղջիկների գեղեցկությունն եք միշտ դիտում. Նա՝ մի թեթև խոսք էր՝ ասաց. իսկ դու, Կարծեմ տարվել ես հույսերով ու հրապուրվել:

**Զ ա ց կ ի յ**

Այս, ո՞չ Հույսերն ինձ քիչ են գուրզուրել:

**Ֆ ա մ ռ ւ ս ո վ**

Նա շշմնջաց իմ ականջին. «Երա՛զըս ի բարե՛ն», եվ կարծեցիր դու, երե՛...

**Զ ա ց կ ի յ**

Ամենինի՞ն:

**Ֆ ա մ ռ ւ ս ո վ**

Ի՞նչ բան էր դա: Այդ ո՞ւմ էր երազում տեսել:

**Զ ա ց կ ի յ**

Երազների մեկնաբանող հո չեմ ես էլ:

**Ֆ ա մ ռ ւ ս ո վ**

Դու Սոֆյային չընավատաս: Դատարկ բաներ:

**Զ ա ց կ ի յ**

Ես հայատում եմ մեփական իմ աչքերին: Կըտա՛մ սոորազրություն, չե՛մ պատահել մեկնումեկին, Որ նմանվեր մի փոքր անդամ... ձեր Սոֆյային:

### Յ ա մ ո ւ ս ս վ

Ե՞ն, խսաքերը նույն... Պատմիր ինձ մանրամաշորն, բարեկամէ  
թափառեցիր արդքան երկար,  
Ո՞ր կողմէրում: Հիմա այդ որտեղի՞ց եկար:  
Զ ա ց կ ի յ

Այժմը դա պատմելու հավաս չըկա:  
Աղջ աշխարհում շըբչե՛լ էի ևս ցանկանում,  
Հարյուրերմբն անդամ չհաջողվեց իրականում:  
(Աւագ ոսթի է ելում)

Ներե՛ք, շատապում էի՞ ձեզ հանդիպեմ շուտով:  
Դեռ առնը չե՞մ եղել: Կըզամ մի ժամ հետո:  
Ո՞ղջ մընացեք:  
Ամեն ինչից, առանց մի բան մոռանալո՞ւ,  
Եվ մանրամասնավե՞ռ,  
Կըհազորդեմ ևս—առաջինը ձե՞զ,  
Որ գուք ամե՞ն մեղ ապածե՛ք:  
(Պանիրում)

Ի՞նչ լո՞յն է նաև

(Գնում 1)

Տ Ե Ս Ա Ր Ա Խ 10

### Յ ա մ ո ւ ս ս վ

(Մենակ)

Բայց ո՞ր մեկն է այս երկուսից.  
«Երազը ի բարի՞ն, հայրի՞կ».  
Եվ այդ, բացեիբա՞ց, առում է ի՞նձ:  
Ո՞չ, կըների՞ն: Հայ թե բաց եմ թողել ձեռքից:

Հենց նոր

Երաշալինն ինձ դարձրեց կասկածավոր:  
 Հիմա ել՝ ամ'... է՛հ, զե ասա'  
 Հըրից ելանք, հրդե՛ն ընկանք:  
 Մեկը՝ աղքատ, մյուսը՝ արդեն թափից փախա՛ծ,  
 Թունդ չույլո՞ց և պըճնամո՞ւ:  
 Այս ի՞նչ պատիժ է, անը ասովա՛ծ,  
 Վիճակը՝ չափահաս աղջրկա հո՛ր:

(Գիուլ Է.)

Ահա առաջին զործովորակն





## ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

### ՏԵՍԱՐԱՆ 1

*Ֆամիլիանով, ժամը առաջ*

*Ֆամիլիանով*

Պետրովշկա, միշտ հագուստըդ նո՞ր է,  
Բայց թևի էլի՛ պատռած։ Օրացույցըս բե՛ր։  
Կարդա, բայց ո՛չ որպես տերաեր,  
Այլ՝ իմաստով, դադարներով, հույզով։  
Սպասիր։ — Նըշի՛ր հուշատերում,  
Առաջիկա շաբթի դիմացը։

Պրասկո՞վյա Ֆյո՞նորօվինայի տո՞ւմ՝  
Երեքարքի, ես երավիրլած եմ.  
Կարմրախայց ձո՞ւկի ուժելու:

Ստեղծվել է այս աշխարհն՝ ինչքա՞ն զարմանահրա՞շ:  
Թե փիլսոփայե՞ս՝ զըստվիդ է պըտթավում.  
Մեկ խընայում ենք մեզ, մեկ էլ՝ տեսնում ես, ճաշ,  
Երեք ժամում ուսես՝ երեք օր չի՝ մարսվում:  
Նըշի՞ր մի, նո՞ւյն այդ օրը... Ա՛չ, ո՛չ  
Կանչված եմ, իինգեարքի՝ բաղման:  
Ո՞հ, ցե՞ղ մարդկանց, ամել ես մոռացման,  
Որ մարդն ամեն մըսնի՝ պիտի այն տուփը նե՞ղ,  
Ուր ո՛չ նըստել կարող է, ո՛չ կանգնե՞լ:  
Իսկ ո՛վ որ գովելի կանքով  
Կուղի թողնել լավ հիշատա՞կ,  
Հանգուցյալից այդ մեծարդու  
Առնի թող օրինակ.  
Նա ինքը՝ կամերգե՞ր. և լո՞վ գիտեր՝  
Որդու համար գտնել բանալիներտ  
Հարուստ էր նա, առավ հարուստ էլ կի՞ն.  
Ոմուսնացրեց որդոցն ու թոռներին.  
Միասի բոլորն էլ մեծ վշառվ տախու են «ողորմի՞»:  
Կուզմա Պետրովիչից, հանդի՞սա ոսկորներին:  
Ա՛յ թե առազեր են Մոսկվայում ապրում ու մահանում:  
Գրի՞ր, որ նույն այդ հինգշարթի, միանգամից, էլի,  
Բայց և զո՞ւցե ուրբաթ, զո՞ւցե և կիրակի՝  
Ես՝ բժիշկ այսո՞ւ մոտ, կնիմանից կը լնեմ:  
Դեռևս չի՝ ծնել, բայց ըստ հաշիվների՝,  
Հստ իս՝ ծը..նի՛ պիտի.

## ՏԵՍԱՐԱԿԻ

Յ ա մ մ ո ւ ս ո վ լ, ծ ա ռ ա մ, զ ա կ ի լ

Յ ա մ մ ո ւ ս ո վ լ

Ա՛յ, Ալեքսանդր Անդրեյիչ... համեցե՞ք, ինդրի՞մ,

Զ ա ց կ ի յ

Զբաղված եք:

Յ ա մ ո ւ ս ո վ

(Յառալին)

Հեռացի՛ր:

(Յառալին դուրս է գնում)

Թէ՞ն, զանազան գործեր, ուզում եմ հուշագրեմ:  
թէ՞ չէ՝ տեսար, կժռացվե՛ր:

Զ ա ց կ ի յ

Ի՞նչ որ, անարամազի՛ր եք դուք զարձել:  
Ասեք, ի՞նչո՞ւ Անժմանա՞կ եկա, գուցե:  
Կամ՞ Սովոյա Պա՛վլովնայի հետո...  
Չընի՞ թէ վիշտ է պատահել:  
Հոգս եմ տեսնում ես ձեր դեմքին, ձեր շարժվածքնեմ:

Յ ա մ ո ւ ս ո վ ս ո վ

Ա՞ս, իմ սրբոն, ո՞նց էլ զըսասը՝ միաքը հանելուկի:  
Անարամազի՛ր... իմ տարիքում,  
Ի՞նչ է, հո չե՞մ պարի պըպըզուկի:

Զ ա ց կ ի յ

Զեղ ոչ ոք այդ չառաջարկեց:  
Միայն երկու խո՞սք էր ասի՝  
Սովոյա Պավլովնայի մասին,  
Հիվանդ է նա, գուցե:

Յ ա մ ո ւ ս ո վ ս ո վ

Թէ՞ն, տե՛ր աստված, հազար անգամ դուք նոյնը կըրկնեցիք,  
Մեկ՝ Սովոյա Պավլովնայից ո՞վ կա զեղեցիկ:  
Ենկ՝ Սովոյա Պավլովնան հո չի՞ հիվանդացել:  
Ասա՞ տեսնեմ, շա՞մ ես նրան հավան կացել:

Աշխարհն ամբողջ ստքերիկ տակն առար,  
Հո չե՞ս ուզում ամուսնանալ

Չ ա ց կ ի յ

Չե՞զ ինչ, հետո... .

Թ ա մ ո ւ ս ս վ

Դատ չէր լինի՝ հարցըների և ի՞նձ.  
Չի՞ որ նրան արտանակից եմ ես մի քիչ:  
Իզուր հո չի՞,  
Որ ինձ նրա հայրիկն են անվանում հենց Են զլիից:

Չ ա ց կ ի յ

Ասհնք թի՞ ես նրանվեի, ի՞նչ կասեիք դուք ի՞նձ:

Թ ա մ ո ւ ս ս վ

Նախ կասեի, լենգությունից ձե՞ռք քաշեիր...  
Ապա՞ եղած յը, կավածքիկ լավ հետաժամիր.  
Իսկ որ զիսավո՞քն է՝ ծառայության մըսիր:

Չ ա ց կ ի յ

Ուրախությամբ կը ծառայեմ, թի՞ քրծնելուց չը պարշեի:

Թ ա մ ո ւ ս ս վ

Հենց ա՞յդ է, որ դուք բոլորդ զոսովացաք անսանելի.  
Հարցըների՝ արածներից ձեր հայրերի՛:  
Սովորիիք՝ հասելով ձեր մեծերի՞ն.  
Մենք, օրինակ, կամ թի՞ իմ հանգույցալ քեռի՞ն,  
Մաքսիմ Պետրովիչը...  
Ուստիմ էր նա ոչ արծաթե, այլ սակեզե՞ն անոթներից:  
Փայլում էր կուրդքն ամբողջապես շըքանըշաններով՝  
Հարցուր մարդիկ էին անձին իլ սպասարկու՛ւ:  
Ութ ձիանի կառուվ էր նա երթեեկում:  
Նրման հո չէր այն ժամանակը ներկային.  
Նա ծառայում էր մայր Եղիսաբեդի՞նաւոյն:



Բողոքն՝ էլ այն սպահին ծանրակլշիռ.

Ավելի, քան գութ քաստուն.

Բարիեիր՝ չե՛ն շարժի

Նույնիսկ խոպոպները ցըցուն:

Իսկ թե իշխան լինեիր դու, ազնրվակա՞ն՝

Հո հ'ս տռավիլ—

Քո կե՛ր ու խո՛ւմն անզան

Պետք է լիներ տաբըե՛ր:

Իսկ իմ քեռի՞ն ի՞նչ են՝ իշխան մի, կամ թե կամու:

Հայացքը լուրջ, բարքը զսոս՝ զ:

Իսկ եթե պետք լիներ հաճոյանալ՝

Թեքվում էր երկուտակ և նա՞:

Արքունական մի հրավերքում, մի օր, նա սայթաքեց.

Ծնկուլ, այնպես, որ քիչ մընաց՝ իր ծոծրմկը չըջախջախլեց.





Ծերռւկը ա՞ն քաշեց. և ձայնն էլ իւրոպսակած.  
 Բայց շընորհնից նրան ժըպի՛տը բարձրագույն.  
 Բարձրամաճեց խընդում մեր կայսրուհին.  
 Իսկ նա՞—ինչպէ՞ս...  
 Ելա՛վ, կարգի՛ ելալ, և աա՛լ ուղեց ողջույն,  
 Բայց վայր ընկալ երկրո՛րդ անգամ, արդեն դիամամբ:  
 Ծիծաղն ուժեղացա՞վ. և նա՛ երբո՛րդ անգամ—ճիշտ նույնությամբ:  
 Զեր կարծիքով, ինչպէ՞ս էր, նա՞... ըստ մեր՝ նա շատ էր բանիմաց.  
 Ընկալ ցավակ, ելալ առնդի:  
 Եղ տես, թե ո՞վ, ո՞վ ամենից հաճախ  
 Մըքոնիքում վիսովի էր հրավիրված:  
 Ո՞վ էր այնտեղ լրտում խսքեր բարեհաճու:  
 Մաքսիմ ՊետրոՎիչը: Ամենուրեք այդ ո՞ւմ, հարգանքն էր շատ:  
 Մաքսիմ ՊետրոՎիչը: Կատանանե՞ր և բաժանում թոշակ:  
 Մաքսիմ ՊետրոՎիչը: Այո՞... Իսկ հիմիկվաննե՞րբեց—հապա՞:

## Զ ա ց կ ի յ

Աշխարհն իրոք հիմարացավ,  
 Կարող եք գուք նշանի հառաջալի,  
 Երբ որ քըննեք գարը անցյալ  
 Եկ բազգասեք ներկա դարին:  
 Ավանդություն է թարմ, բայց հավատալն է անհընար.  
 Փատարանիկում էր նա՛ ում վիզոց որ շա՛տ կրանար:  
 Ճակատներով, անգիտարանը, հասակն էին զարկում,  
 Դիրքեր առնում խաղաղության պահին և ոչ պատերազմում.  
 Ովքեր կարիք կրւենային՝ նրանց զգիւմնք—վոշում թող թավալվեն.  
 Իսկ բարձրերի՝ համար քըննանը էին հյուսում, ինչպես մի ժապավեն:  
 Խոնարհության և սարսափի շրջան էր դա:  
 Ողջը՝ ցարին ծառայելու գիրմակի տակ:  
 Խոսք չեմ ասի ևս ձեր քեռու վերաբերյալ.  
 Չըխըսովինք աճյունն իրաւ:  
 Մինչդեռ հիմա՝ այն ո՞վ կըցանկանար,  
 Թեկուզ և քընությամբ սարված,  
 Վիզն իր ջարդել՝ նըա՝ համար,  
 Որ խընդացնի մարդկանց:  
 Իսկ մի ծերուկ, հասակակից,  
 Ճոթովելով իր հին մաշկի՛ց՝

Քեռու այդ ցատկումի՞ն ի տես,  
Ասե՛ր զուցե.—Ա՛խ, եթե ես՝ նույնպե՞ս...  
Սառըության սիրահաբներ ամենուրեք գեռ կա՞ն,  
Բայց ծիծաղն է զլապում նրանց, և ամենիքը գնում է ասնձ:  
Իզ՞ւր է, որ մեր օրերում ամեն մի ցար  
Ժլատ է վարձատրում դրանց:

Յ ա մ ո ւ ս ս վ

Աստված իմ՝ բարերար, սա հո դարձել է կարոնաշը:

Զ ա ց կ ի յ

Աշխարհը, ո՞չ. արդեն այդպիսին չէ՞:

Յ ա մ ո ւ ս ս վ

Վատանգավո՞ր երիտասարդ:

Զ ա ց կ ի յ

Հիմա ձգտում է մարդ՝ շնչել ազա՞տ:  
Եվ չի շապում, որպեսզի և իրեն  
Միմոսների գնդին անդամ դրեն:

Յ ա մ ո ւ ս ս վ

Ի՞նչ է ասում,  
Ինչպես զըրում, այնպես է և խօսում:

Զ ա ց կ ի յ

Հովանավորի տանը՝ հոբանչի՝, առասսապին նայել,  
Եթե այսնամա՞ւ, լսե՛լ, հաճոյանա՛լ, հնաը ձաշել,  
Աթոռ հրամցնել, կամ թաշկինակը բարձրացնել:

Յ ա մ ո ւ ս ս վ

Ազատություն է ցանկանում մեզ քարոզել:

Զ ա ց կ ի յ

Ով ապրում է գյուղում և ճամփորդում...

**Յ ա մ ո ւ ս ո վ**

Զի՞ ճանաչում իշխանություն:

**Զ ա ց կ ի յ**

Ով որ գործի՞ն է ծառայում և ո՞չ մարդկա՞նց...

**Յ ա մ ո ւ ս ո վ**

Կարգելելի՛ ես խիստ  
Մի փոքր անզամ այդ քո անձանց  
Մոտ թողնեին քաղաքներին աթոռանի՛սու:

**Զ ա ց կ ի յ**

Կըաամ ձեզ վերջապես հանդի՛սու...

**Յ ա մ ո ւ ս ո վ**

Համբերություն, ո՞ւժ չըմնաց, շատ է վրդովեցնո՞ր:

**Զ ա ց կ ի յ**

Զեր գարը պախարակեցի ես անողոք:  
Թողնում եմ ձեր իշխանության՝  
Դե՞ն նետեցեք մասը զըրա,  
Տվեք, թեկող և մեր ժամանակին՝ ավելցուկով:  
Դե թող այդպի՞ս լինի, չե՞մ լա ես արցունքով.

**Յ ա մ ո ւ ս ո վ**

Զեզ ճանաշե՛լ լսկ չեմ ուզում.  
Զի՞մ հանդուժում այլասերում:

**Զ ա ց կ ի յ**

Ավաբաեցի...

**Յ ա մ ո ւ ս ո վ**

Լավ, ականչներս խըցեցին

**Զ ա յ կ ի յ**

Խնչո՞ւ համար, նըանց հո չե՞մ անպատվելու:

**Յ ա մ ո ւ ս ո ւ գ**

(Արազուբնի)

Հո՞վ կուլ տալով՝ աշխարհ չափչռփեցին,  
Վերադարձան, դե սրանցից կա՞րդ ըսպասիր:

**Զ ա յ կ ի յ**

Ես զերջացրի...

**Յ ա մ ո ւ ս ո ւ գ**

Եղի՞ր քարի և զթասի՞րու:

**Զ ա յ կ ի յ**

Ես զեծը չե՞մ շարունակիր...

**Յ ա մ ո ւ ս ո ւ գ**

Աղմատ թող իմ հոգին՝ զեթ ապաշխարանքի՞:

ՏԵՍԱՐԱԿԱՆ 3

Նըանը և ծառաւ

**Ե ա ս ո ւ ս**

(ՄՏԱԿԱՆԻ)

Գընդապետ Սկալոգմուր...

**Յ ա մ ո ւ ս ո ւ գ**

(Ոյինչ չի ՏԵՍԱՐԱԿԱՆ և չի լուսվ)

Ճաշըդ կեփե՞ն,

Քեզ քարշ կըտան դատի՞, բանաւ կընետե՞ն:

**Զ ա ց կ ի յ**

Ինչոր մի ժարդ բարեհաճել է զալ ձեր տուն:

**Ֆ ա մ ո ւ ս ո վ**

Քեզ չեմ լըսում, դատի՞ւ:

**Զ ա ց կ ի յ**

Դառան է զեկուցում:

**Ֆ ա մ ո ւ ս ո վ**

Ես չեմ լըսում, դատի՞ւ, դատի՞...

**Զ ա ց կ ի յ**

Ես նայեցեք, ձեզ են խնդրում:

**Ֆ ա մ ո ւ ս ո վ**

(Հետևը նայելով)

Ի՞նչ ըստ հաստ:

Հենց ըսպասում էի այդ սովորմին:

**Ծ ա ռ ա**

Գընդապես Ակալուզութը, հրամայում եք ընդունել:

**Ֆ ա մ ո ւ ս ո վ**

(Ոտի ելնելով)

Ավանակնե՞ր, հարյո՞ւր անգամ կը կնեմ.

Կանչել, հրավիրել ներս, խնդրել, ասել, որ տանն եմ ես,  
Ուրա՞խ եմ շատ: Կորի՞ր, մի՛ ուշացիր:

(Մառան գնում է)

Խնդրո՞ւմ եմ քեզ, պարո՞ն, դու, նրա մոտ ըզգուշացիր:

Հայտնի մի մարդ է նա և շատ պատկառելի.

Զեռք է բերել իր տարիքին անհամեմատ՝  
Եքանշա՞ն անթիվ և աստիճան նախանձելի՝,  
Սյոր կամ վաղը՝ զեներա՞լ  
Խնդրեմ՝ իր հետ զու քեզ պահիր մի քիչ համեստ,  
Եղիք հակի՞րձ...  
Է՞ն, Ալեքսանդր Անդրե՞լի, վա՛տ է, անհարմա՞ր,  
Իսձ մոռ չնորհ է բերում նա հաճախակի'.  
Իսկ ես՝ գիտես, ուրա՞ն եմ ամենքի համար.  
Բայց Մուկվայում ավելացնում են եռակի՝  
Իբրև թե՛ նա  
Սոֆյայիս հետ պիտի ամուսնանատ  
Զրույցնե՞ր են գատարի:  
Գուցե՛ ուրախ լինի ինքը սրտանց,  
Բայց չեմ զգում՝ անհրաժեշտությո՞ւնը գրանց:  
Ազջիկ շունեմ՝ այսօր-վաղը ամուսնացող.  
Սո՛վյան, չէ՞ որ, ջանե՞լ է զեռ Թեհ՝ կամքն ասուծո՞ւ  
Թարս ու շխանկ շատ շլվիճե՞ս զու նրա հետ  
Եվ զե՞ն նետիր զազափարներդ անհեթեթ:  
Բայց նա չեկավ: Ի՞նչո՞ւ ի՞նչ կընի պատահած...  
Հա, երկի, այն մյուս դռնով նա իմ սենյակն անցավ:

(Ետապ հեռանում է):

ՏԵՍԱՊ ԱԿԱՆ 4

Չ ա ց կ ի յ

Ի՞նչպե՞ս է շրփոթվում. և ի՞նչ իրարանցում:  
Իսկ Սաֆյան: Եվ շրկած այստեղ, իրոք, մի ինչ-որ փեսացնու  
Վաղո՞ւց է, որ ինձնից, ասես, թե օտարից է խուսափում:  
Ի՞նչո՞ւ պիտի չքանվեր հիմա այստեղ, ինձ հետ  
Իսկ ո՞վ է Մկալոզուբը. հայրը խիստ էր զառանցում:  
Եվ ոչ միայն հայրը, գուցե...  
Ա՛խ... վերջ ասի թող սիրուն նա,  
Ո՞վ սիրածից եւեք տարով կհեռանատ

Չացկիլ, Ֆամուռանգ, Սկալոզուք

**Ֆամուռանգ**

Սերգեյ Սերգեյիչ, այս կո՞ղմն, այսահե՞տ.  
Խոնարհ խնդրե՞մ, այսահետ շատ ավելի՞ է տա՞ք:

Մըսել եք. ձեղ կըտաքացնե՞նք:  
Օդանցքն էլ կըփակե՞նք արա՞գ:

**Սկալոզուք**

(Բամբ ձայնով)

Ինչո՞ւ պիտի, զորօրինակ, դուք մազլցե՞ք:  
Ինքնե՞րդ... բայց նեղուում եմ ես, ինչպես ազնիվ մի օֆիցե՞ր...

**Ֆամուռանգ**

Մի՞թե բարեկամիս համար ես ոչ մի քայլ չանեմ...  
Սերգեյ Սերգեյիչ, նո՞ւ, նոգի՞ս  
Գըլսարկը ցա՛ծ դըրք, հանեցեք սնւրը ձեր.  
Ահա և թիկնաթոռ՝ մեկնավեցեք հանգիստ:

**Սկալոզուք**

Որտեղ և հրամայի՞ք. միայն թե մեզ տե՞ղ լինի նստելու:  
(Երեքն էլ նստում են. Զացկին՝ մի փոքր հեռու)

**Ֆամուռանգ**

Այս, սիրելի՛ս, ասեմ՞ չմռանա՞մ հետո.  
Թո՞ւյլ տըլեք, բարեկա՞մ հաշվվե՞նք, թեկուզ նեռո՞ւ.  
Ժառանգություն հո չե՞նք բաժանելու.  
Ձեղ հայտնի չէ՛ր,  
Իսկ ի՞նձ է՛լ առավել.  
Ես շնորհակա՞լ եմ, ի՞նձ ասաց ձեր հորեղբոր որդի՞ն.  
Նաստա՞յա նիկոլա ենան ի՞նչըն է ձեր:

Ս կ ա լ ո գ ո ւ բ

Ես արդ մարդուն, ներսղություն, չեմ ճանաչում:  
Մենք նըրա հետ չենք ծառայում:

Ֆ ա մ ո ւ ս ո վ

Սերգեյ Սերգեյիչ, նու, այդ դուք եք հըամայում:  
Ո՞չ, ազգակցիս առաջ, ո՞ւր էլ լինի, ես կըսողամ,  
Կողոնեմ՝ ծովի խորքումն անդամ:  
Ինձ մոտ օտար ծառայողներ լինում են բացառիկ,  
Բոլո՞րն էլ – քույրերիս, կամ թե քենու որդիք:  
Մոլչալինն է միայն օտար ծառա,  
Այդ էլ՝ նրա համար, որ շատ է գործարար:  
Եթե խաչի ներկայացնեն, պաշտոն մի ազատվի՝  
Նու, ո՞նց դու չըջանաս, որ տան հարազատի՞դ:  
Ես ձեր եղբո՞րն եմ մտերիմ... և նըանից եմ իմացել,  
Որ ձեր շնորհիվ շատ պարզեներ է ստացել:

Ս կ ա լ ո գ ո ւ բ

Տասնըերե՛ք թվին... աչքի ընկանք իր հետ երեսուներորդ գընդում:  
Եգերակա՞ն. հետո՝ քառասունհինգերորդ:

Ֆ ա մ ո ւ ս ո վ

Հա՞յ, երջանի՛կ է՝ ով ունի նըման սրդի:  
Կարծեմ՝ կոճկի օղակի մեջ նաև փոքրիկ օրդե՞ն:

Ս կ ա լ ո գ ո ւ բ

Երբ խըամատնե՛ր մտանք մենք, երեքին օգոստոսի – ս.  
Նա ըստացավ ժաղավենով, իսկ ես՝ վըդի՛ս:

Ֆ ա մ ո ւ ս ո վ

Շատ սիրալի՛ր մի մարդ – կըտրի՛ճ տեսքով –  
Հիանալի է նաև արդան ձեր հորեղբոր:

### Ս կ ա լ ո գ ո ւ բ

Բայց իր զըռմին է մացրել նոր կանոննե՞ր.

Նոր սատիճա՞ն էր ստանում, բայց պաշտոնն է, հանկարծ, թողե՞լ.  
Մեկնել է գյուղ և սկսել... դրվե՞ր կարդալ...

### Ֆ ա մ ո ւ ս ո վ

Այժ քեզ ջանելություն... Թրքեր կարդալ... Հետո էլ ցա՛պ:  
Իսկ գուք՝ չե՛ք խուսափել՝ կարգին ծառայելուց:  
Վաղուց եք գնդապետ, բայց ծառայում եք ոչ հնուց:

### Ս կ ա լ ո գ ո ւ բ

Ես երջանիկ եմ բավական՝ ընկերներիս շըջապատռմ.

Ազատ աեղեր շա՛տ բացվեցին.

Մեկ մեծերից ցն են ազատում՝

Մեկ էլ տեսար՝ պատերազմում կոսորվեցին:

### Ֆ ա մ ո ւ ս ո վ

Այո՛, տերն ընտրյալի՞ն կըբարձրացնի:

### Ս կ ա լ ո գ ո ւ բ

Ոմանք ինձնից էլ երջանիկ գոնվեցին.

Մեզ մոտ, տասնութերորդ դիմիկայալում, նույնուն կային.

Թեկուզ և գեներալը մեր բըիգապային:

### Ֆ ա մ ո ւ ս ո վ

Բայց ներեցեք, էլ ի՞նչն է պակասում և ձեզ:

### Ս կ ա լ ո գ ո ւ բ

Զե՞մ արանջում. այո՛, ինձ էլ չեն շըջանցել.

Աակայն երկու տարի գնդի հետքից են մա՞ն ածել:

### Ֆ ա մ ո ւ ս ո վ

Գնդի հետքից: Տեսէ՞ք թե ի՞նչ.

Բայց վոխարենը ձեր հետքից

Դեռ շա՞տ շատերն են մա՞ն դալին:



*Ո կ ա լ ո գ ո ւ ը*

Ո՞չ—ս, կորպուսում ինձնից հներն են քարշ զալիս,  
ես ծառայում եմ ութ հարյուր ի՞նը թվից:  
Աստիճաններ ձեռք բերելու՝ հուներ ունենք հիանալի:  
Ես այդ մարին, իբրև հրմուտ վիլիսափա, խորհում եմ ինքս ինձ:  
Միայն թե՛ զեր... հասնեմ աստիճանին գեներալի՛:

*Յ ա մ ո ւ ս ո վ*

Լո՛վ եք դառնում, տա՛ ձեզ աստիճած տոռղջություն  
եվ աստիճան գեներալի: Ասա, հետո՝  
Ի՞նչո՞ւ հետաձգենք, խոսք կըբացվի  
Զեր զե՞նե՞րաւունու մարին:

*Ո կ ա լ ո գ ո ւ ը*

Ամուսնանա՞լ: Դեմ չեմ, ամենեի՞ս:



*Ց ա մ ու ս ո վ*

Դե՞հ, մարդ կա՞ քո՞ւյը ունի, քրոջ աղջի՞կ, և գո՞ւստը երկի;  
Մոսկվայում չէ՞ որ հարսնացու շա՞տ կճարվի,  
Շա՞տ Աձո՞ւմ են տարեցարի:  
Ե՞հ, սիրելիս, թող մեզ լինի խստավանա՞ք,  
Որ հազի՞վ թե կըդըանվի Մոսկվայի՞ պիս մայրաբաղար:

*Ս կ ա ւ ո գ ու ր*

Հիստանցիաներ հսկայակա՞ն չափի:

*Ց ա մ ու ս ո վ*

Բնտիր ճաշակը, բարեկամ, մեզ չի՞ խարի:  
Բոլոր բաներն օրի՞նք ունեն.  
Այ, օրինակ, մեզ մոտ ավանդ է հին—  
Ըստ հոր՝ պատկում են և որդուն:

Թող վաս լինես, բայց եթե դու

Երկու հազար ճուրտ ունեցար՝

Փեսա՛ գարձար:

Ուրիշն ավելի ժի՞ր լինի և մեծամոռությամբ փքված, ներիբ:

Իրեն խերի՞ թող ձեացնի,

Բնաանիքում ներս չե՞ն տանի: Զե՞ս գարմացնի.

Զէ՞ որ միայն այսաեղ են գեռ հարգում ազնրվականներին:

Եվ այդ միայն արդյոք... հապա մեր ող ու հա՞ցը.

Ով որ շնո՞ր բերեց, մեր գուոր միշտ էլ բա՞ց է:

Խնդրի՞ մա կոչածների համար և հյուրերի անկոչ,

Եվ մանավանդ՝ օտարականների առաջ,

Թեկուզ ազնի՞վ է նա, թեկուզ և ո՞չ:

Մեզ համար մեկ է այդ՝ բաց է սեզանն ամբողջ:

Առեք, խնդրեմ, ոսից զլուխ, մեր մոսկվացուն բնիկ,

Նա ունեցել է միշտ հատուկ կնի՞ք:

Խնդրեմ, անսեր գուք մեր ջանելներին՝

Պատունինե՞ր—որդիի՞ք, թոռնե՞ր,

Մենք նախատեմ ենք, բայց թողնեն՝

Տասնհինգ տարեկան չեղած՝ զամբը կը տան ուսուցիչներին:

Իսկ մեր ծերե՞րը... Բորբոքեն թե չէ՝

Էլ կը վիճն և խոսքն ամեն՝ զատավճի՞ռ.

Բորբն էլ հին տոնմականներ և ո՞չ ոքից երկուոր չունեն.

Իսկ կառավարությա՞ն մասին, երբեմն այնպիսի կարծիք ունեն,

Ով թե՝ լըսո՞ղ եղավ..., գդբախտությո՞ւն:

Զէ, թե մատծում են նորությո՞ւն,

Կպչում են մեկ կամ մյուս բանի,

Հաճախ էլ ոչնչի՞։ Ասոված հեռո՞ւ տանիի...

Վիճում են, ազմկում... ցրվում են տան.

Խելքով՝ նրանք պաշտոնաթող կանցլեր են մշտարթուն:

Են ձեզ ասեմ, ուրեմն, ժամանակը չի՝ հասել,

Բայց գործն՝ առանց նըրանց, կարող են վրնասե՞լ

Իսկ արկիննե՞րը մեր, փորձեք նըրանց զսպել:

Դասավորնե՞րն են բոլորի—իրենք չունեն զատավորներ:

Քարտ խաղալիս՝ երբ բուշան են բարձրացնում անզթաբար:

Տա՞ մեզ ասոված համբերություն: Ես է՛լ եմ, չէ՞, ամուսնացել:

Եշանակեք նրանց, թեկուզ, քրնարի համանատա՞ր:

Աւարեկեցեք սենան՝ նիստի՞ն կրմասնալցեն:

Իրի՞նա Վա՛սնան, Լուկի՞րիա Աղեքսենան,

Տասյանա Յուրեկնան. Պուլսերիտա Անդրեանոն.  
 Իսկ մեր ազդկների՝ հանդեպ՝ կխօնարձվի ամեն ահանող.  
 Պրուսաց նորին մեծությունն է եղել մեզ մոտ.  
 Եվ հիացել անշափ մեր Մոսկվայի ազդկներով,  
 Զէ՛ թե նըանց գեղեցկությամբ՝ բարքով.  
 Որտե՞ղ կզանըին իրենց պես բարեկերթ.  
 Եվ զարդարին զիտեն, մանրակրիլաւ:  
 Թափշով, քոռով ու կերպասով:  
 Մի խուսք անզամ պարդ չեն ասում. միշտ էլ նազո՞վ:  
 Երգում են ձեզ համար ոսման ֆրանսիական.  
 Եվ նոաաներ ասնում վերին,  
 Զգոսում են ուզզակի մարդկանց զինվորակա՞ն,  
 Որովհենու ոզի՛ ունեն հայրենասերների՛:  
 Կասի՞մ ձեզ վճռական, ավա՞գ,  
 Հազիր թե զըտնվի Մոսկվայի՝ պես ուրիշ մայրաքաղաք:

Սկա կալոզ զուբ  
 Քառա իմ զատողության  
 Հրդեհը շա՞մ է նպաստել նըա գեղեցկացման:  
 Ֆա մուսուզ  
 Մի՛ հիշեցնեք: Քի՛չ են աըրարնջացել արդեն:  
 Այն օրվանից ճանապարհներ, մայթեր,  
 Բոլոր աներն են նորացել:

Ֆա մուսուզ  
 Տները նոր, նախապաշտամունքները հի՞ն են միացել:  
 Աւրախ եղեք, որ նըանց չեն ոչնչացրել  
 Ո՞չ աարդենք, ոչ հրդեհներ, ոչ մողաներ:

Ֆա մուսուզ  
 (Չոյցկուն)  
 Ասածըս լա՞վ հիշեք, է՛յ, դո՞ւն...  
 Ես լնդրեցի՝ լըոհս. մեծ բան հո չի՞ւ  
 (Ոկալոզութին)  
 Թո՞ւյլ ազեք՝ ձեզ ներկայացնեմ, Անդրեյ Անդրեիչի՞ն  
 Իմ հանգուցալ բարեկամի որդո՞ւն:

Զի՞ ծառայում, այսինքն՝ ծառայելլ անօդուտ է համարում:  
Բայց թե ուզե՞ր աեր կղառնար հացի:  
Ավտո՞ս և շատ ափսոս, երիտասարդ է, խելացի:  
Եվ լավ գրում է, թարգմանում,  
Ո՞ւնց չցալես, հասա, որ այսպիսի խելքով...

### Զ ա ց կ ի յ

Չի՞ լինի, որ ցավեք մեկ ութիշի՞ վերըով,  
Չեր զովեստնե՞րն անդամ կըվըրգովեն մարդու:

### Ց ա մ ո ւ ս ո վ

Մենակ ես չէ. բոլորն են քեզ դատապարտում:

### Զ ա ց կ ի յ

Իսկ ովքե՞ր են դատավորներ. ընթացքում շատ տարիների  
Նրանց թշնամությունն ազատության հանդեպ՝  
Թարձալ անհաշտելի:

Նրբանք քաղում են գեռ դատողությունն իրենց  
Դրիմի զրավման, օչակովյամն տարվա լրագրերից:  
Մեզ նախառում են միասին,  
Երգերը նույն երգում են անընդհատ,  
Եվ չեն առում իրենց մասին,  
Թե ինչքան նին, այնքան էլ վաստ

Ուր են, մեզ մատնացույց արեք հայրե՞ր հայրենիք,  
Արոնց օրինակին մենք նեւենք պիտի:

Նըրա՞նք են, որ կողոպուտով հարստացան,  
Դատից ազատվեցին՝ չնորհիվ բարեկամի և ազգակցի,

